

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРЦАХ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ И СПОРТА  
УНИВЕРСИТЕТ МЕСРОП МАШТОЦ

THE REPUBLIC OF ARTSAKH  
THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE AND SPORT  
MESROP MASHTOTS UNIVERSITY

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
СБОРНИК СТАТЕЙ КОНФЕРЕНЦИИ  
SET OF CONFERENCE ARTICLES

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝  
նվիրված Մեսրոպ Մաշտոց Համալսարանի գործունեության  
20-ամյակին

*ԿՈՎԿԱՍՆ՝ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՆ*

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ,  
посвященная 20-летию деятельности  
Университета Месроп Маштоц

*КАВКАЗ – НАШ ОБЩИЙ ДОМ*

INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE  
DEVOTED TO THE 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF MESROP MASHTOTS UNIVERSITY

*CAUCASUS – OUR COMMON HOME*

27-29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 2017

27-29 ОКТЯБРЯ  
СТЕПАНАКЕРТ 2017

27-29 OCTOBER  
STEPANAKERT 2017

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝  
Համանախագահ՝

Ղ.Ս.Գաբրիելյան, ՄՄՀ ռեկտոր, մ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)  
Ղ.Ս.Բաբայան, փ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)

Վ.Ռ.Բալայան  
Ս.Ա.Խանյան  
Ս.Շ.Ծաղիկյան

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր  
ԱրՊՀ և ՄՄՀ պրոֆեսոր, բ.գ.դ.  
ՀՌՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ,  
ի.գ.դ., պրոֆեսոր

Ա.Ս.Ծպենցյան  
Վ.Ն. Կոնովալով

ՀՀ պետական կառավարման ակադեմիա, տ.գ.թ., դոցենտ  
ՀՂՀ, Սոցիոլոգիայի և տարածաշրջանագիտության ինստիտուտի կոնֆլիկտոլոգիայի և  
ազգային անվտանգության ամբիոնի փ.գ.թ., պրոֆեսոր

Վ.Զ.Հակոբյան  
Է.Ա.Հայրապետյան  
Լ.Շ.Հովհաննիսյան  
Լ.Գ. Ղարախանյան

ՊՊԼՀ պ.գ.թ., դոցենտ, ՄՄՀ պատվավոր պրոֆեսոր  
ՄՄՀ պրոռեկտոր, մ.գ.թ., դոցենտ  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր  
ԱՀ ԿԳՄՆ, հ.գ.թ., դոցենտ

Է.Գ.Մինասյան  
Լ.Ա.Միրզոյան  
Վ.Ս.Պետրոսյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր  
ՀՃՇԱՀ, մանկ. գիտ. թեկ., դոցենտ  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, ԵՊՀ  
հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Ս.Ա.Պողոսյան

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի  
տեղակալ, պ.գ.դ.

Ս.Պ.Պոցելուև

ՀՂՀ, Փիլիսոփայության և հասարակա-քաղաքական  
գիտությունների ինստիտուտի տեսական և կիրառական քաղաքագիտության ամբիոնի  
պրոֆեսոր, ք.գ.դ.

Գ.Ս.Քեչյան

ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, ք.գ.դ.,  
պրոֆեսոր

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель:  
Сопредседатель:

Д.С.Габриелян, ректор УММ, к.п.н., профессор УММ  
Г.М.Бабаян, к.филос.н., профессор УММ

Ճ.Ա.Այրապետյան  
Յ.Յ.Ակոբյան  
Յ.Ր.Բալայան  
Լ.Գ.Կարահանյան  
Գ.Մ.Կերյան  
Յ.Ն.Կոնովալով

կ.պ.ն., доцент, проректор УММ  
ПГЛУ, к.ист.н., доцент, почетный профессор УММ  
вице-спикер Национального Собрания РА, д.и.н., профессор  
МОНС РА, к.п.н., доцент  
Заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ, д.п.н., профессор.  
профессор кафедры конфликтологии и национальной безопасности Института социологии и  
регионоведения ЮФУ, д.ф.н.

Ճ.Գ.Մինասյան  
Լ.Ա.Միրզոյան  
Լ.Ս.Օգանեսյան  
Յ.Ս.Ստրոսյան

декан исторического факультета ЕГУ, д.и.н., профессор  
НУАСА, к.п.н., доцент  
Член-корреспондент НАН РА, профессор  
заведующий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ, руководитель отдела  
армяно-курдских отношений ЕГУ, к.и.н., доцент

Ս.Ա.Սոցոսյան  
Ս.Ս.Սոցոսյան

заместитель декана факультета истории и правоведения АГПУ им.Х.Абовяна, д.и.н.  
профессор кафедры теоретической и прикладной политологии Института философии и  
социально-политических наук, ЮФУ, д.п.н.

Ս.Ա.Սահյան  
Ս.Ս.Սահյան  
Ա.Ս.Սահյան

д.ф.н., профессор АрГУ и УММ  
зав.кафедрой уголовного права и уголовно-процессуального права РАУ, д.юр.н., профессор  
Академия государственного управления РА, к.э.н., доцент

ՀՏԳ 378:06  
ԳՄԴ 74.58  
Կ 767

Կովկասը՝ մեր ընդհանուր տուն: Միջազգային գիտաժողով՝  
Կ 767 նվիրված Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին:  
Ստեփանակերտ: «Դիզակ պլուս» հրատ., 2017.- 508 էջ:

Настоящий сборник статей по итогам международной научной конференции, проходившей в Университете Месроп Маштоц города Степанакерта (27-29 октября 2017 года), представляет собой результат сотрудничества ученых Арцаха, Армении и других стран СНГ. Участники конференции представили свое видение и анализ актуальных вопросов гуманитарного, экономического и социально-политического развития региона.

ՀՏԳ 378:06  
ԳՄԴ 74.58

**ԱՐԻՔԵԶԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԱՊՐԻՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ, ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԿԶՔՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՈՂՄԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՍՊՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՒՄ**

**Նելլի Բաղդասարյան  
պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ, ՄՄՀ  
Արցախ**

**Անոտացիա:** Ապրիլյան պատերազմից հետո ծավալված դիվանագիտական գործընթացները տեղավորվում են «չգաղտնագերծված դիվանագիտության» ձևաչափում: Հատկանշական է, որ ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության սրման հերթական մակարդակը դարձյալ ցուցադրեց հարցի հիմնախնդրայնությունը, տարածաշրջանային զարգացումների նկատմամբ ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ տարածաշրջանային խաղացողների հակակշռման ձգտումներն ու քայլերը: Հակամարտությունների կարգավորման դերակատարությունը ստանձնած պետությունները բացի կարգավորման բուն նպատակից ունեն սեփական աշխարհաքաղաքական խնդիրներն առաջ տանելու, ազդեցության գոտիները վերահաստատելու, տարածաշրջանային ազդեցության մրցավազքից հետ չմնալու միտումներ, ըստ այդմ հետաքրքրվածության մակարդակը պայմանավորված է միջնորդ պետության ներքաղաքական կամ արտաքին քաղաքական առաջնահերթություններով:

**Բանալի բառեր՝** ադրբեջանա-դարաբաղյան հակամարտություն, Ապրիլյան պատերազմ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, տարածքային ամբողջականության սկզբունք, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունք:

1994թ. հրադադարի հաստատումից հետո աննախադեպ մակարդակով 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սկսված և ապրիլի 5-ի օրվա երկրորդ կեսին հանդարտված ռազմական գործողությունները Ադրբեջանի կողմից խնդիրը վերաթարմացնելու փորձ էր: Հատկանշական է, որ ապրիլյան քառօրյա ռազմական գործողություններին զուգընթաց ծավալվել էր միջազգային հանրության համաչափ արձագանք, մասնավորապես՝ կողմերին ուղղված կոչերում շեշտվել են՝ **միջազգային իրավունքով սահմանված պետությունների միջև հարաբերությունները կարգավորող սկզբունքները՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքին հավասարիմ մնալը, վեճերի խաղաղ կարգավորումը, պետությունների տարածքային ամբողջականության հարգումը** [1]: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կողմից հիմնախնդրի կարգավորման ձևաչափում վերը նշված սկզբունքներին համահավասար ընդունվում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը:

Հատկանշական է, որ եթե առաջին երկու սկզբունքները գրեթե համաչափ նշանակություն և կիրառություն ունեցան, ապա միջազգային իրավունքի տարածքային ամբողջականության սկզբունքը կիրառվեց առավել զգուշավորությամբ, որովհետև հակամարտությունների կարգավորման գործում այն համեմատական-հարաբերական արտահայտման հնարավորություններ ունի: Ապրիլյան պատերազմին հաջորդած քաղաքական գործընթացներում միջազգային իրավունքի վերոնշյալ սկզբունքները հակամարտող կողմերի նկատմամբ տարբեր կիրառություն են ունեցել այն գործադրած պետությունների կողմից:

**Ա Միջազգային իրավունքի ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման և հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքների բաղադրիչները ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության քաղաքական զսպման գործիքակազմում**

Միջազգային իրավունքի ուժի և ուժի չկիրառման սպառնալիքի սկզբունքը բավականին հետաքրքիր դրսևորումներ ունեցավ ապրիլյան և հետապրիլյան քաղաքական զարգացումներում: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության և ընդհանրապես միջազգային հանրության գործողությունները սահմանափակվում են հակամարտ կողմերի բևեռացումը մեղմելու, կողմերի միջև հարաբերվելու եզրեր և կարգավորման ուղիներ գտնելու գործառնություն, հետևաբար, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը տարածվեց կողմերի վրա:

*Ըստ այդմ՝ ապրիլյան և հետապրիլյան քաղաքական գործընթացներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գործելակերպում հակամարտող կողմերին ուղղված հիմնական քաղաքական զսպման լծակն էր ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման և հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքը:*

2016 թ. ապրիլի 2-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները համատեղ հայտարարությամբ խորին մտահոգություն էին հայտնել դարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով հրադադարի լայնամասշտաբ խախտման առիթով՝ կողմերին կոչ անելով դադարեցնել ռազմական գործողությունները և ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կայունության հասնելու ուղղությամբ: Հայտարարության տեքստում վերահաստատվել է այն փաստը, որ հակամարտության խաղաղ կարգավորմանն այլընտրանք չկա [2]: 2016 թ. ապրիլի 2-ին ԵԱՀԿ գործող նախագահ և Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը իր մտահոգությունն էր հայտնել Լեոնային Ղարաբաղում տեղի ունեցող ռազմական գործողությունների և մարդկային կորուստների, այդ թվում խաղաղ բնակչության շրջանում գոհերի առիթով՝ կոչ անելով անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և պահպանել հրադադարի ռեժիմը: Նա բացատրել էր հիմնախնդրի ռազմական ճանապարհով լուծումը և կողմերին հորդորել վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից ընդունված սկզբունքների շրջանակներում [3]: Ապրիլի 5-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրների ներկայացուցիչները հանդես էին եկել համատեղ հայտարարությամբ՝ դատապարտելով շփման գծի ողջ երկայնքով բռնության բռնկումները և հորդորելով կողմերին դադարեցնել ուժի գործադրումը: Հայտարարության մեջ վերջիններս ողջունել էին Ռուսաստանի, Ամերիկայի և Ֆրանսիայի համանախագահների՝ կողմերի հետ բանակցություններ նախաձեռնելու ծրագրերը[4]:

Ապրիլի 5-ին Ռուսաստանի միջնորդությամբ Մոսկվայում ձեռք էր բերվել բանավոր պայմանավորվածություն՝ դադարեցնելու ռազմական գործողությունները եւ վերականգնելու հրադադարը՝ համաձայն 1994թ. զինադադարի հաստատման մասին Եռակողմ համաձայնագրի:

Ապրիլի 5-ին Լեոնային Ղարաբաղի հակամարտության գոտում իրավիճակի սրման առնչությամբ Վիեննայում տեղի ունեցավ ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստ, որի ընթացքում դեսպան Ջեյմս Ուոռլիքը /ներկայացնում էր Մինսկի խմբի երեք համանախագահների կարծիքը/ և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրճիկը ԵԱՀԿ 57 անդամ պետություններին տեղեկացրել էին Լեոնային Ղարաբաղում տեղի ունեցող զարգացումների մասին, միաժամանակ ողջունելով ռազմական գործողությունների դադարեցման մասին լուրը Անջել Կասպրճիկը և Ջեյմս Ուոռլիքը կողմերին կոչ էին արել հարգել հրադադարի պահպանման ռեժիմը: Հայտնելով իրենց մտահոգությունը հակամարտության սրման կապակցությամբ ԵԱՀԿ անդամ երկրներն իրենց պատրաստակամությունն էին հայտնել հակամարտության խաղաղ կարգավորմանը հասնելու համար [5]: 2016 թ. ապրիլի 7-ին Վիեննայի խորհրդի նիստին հետևել էր ԵԱՀԿ ՄԽ համանախագահների և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրճիկի այցը Ստեփանակերտ[6]:

Ապրիլյան և հետապրիլյան քաղաքական-դիվանագիտական գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ 2016թ. մայիսի 16-ին Վիեննայում ԱՄՆ պետքարտուղարի նախաձեռնությամբ՝ կազմակերպվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի մասնակցությունը ԼՂ հակամարտության կարգավորման առիթով հրավիրված քննարկմանը, որին մասնակցում էին նաև ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների արտգործնախարարները, դեսպանները, ինչպես նաև ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը: Վիեննայում համանախագահող երկրների ներկայացուցիչները պնդել էին 1994-1995 թթ. հրադադարի համաձայնագրերի պահպանման անհրաժեշտությունը, համաձայնություն էր ձեռքբերվել մշտադիտարկման և միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի կարողությունների ավելացման և հակամարտության համապարփակ կարգավորման բանակցային գործընթացի հնարավոր վերսկսման ուղղությամբ [7]:

ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահության շրջանակներում ձեռնարկված քայլերի արդյունքում ապրիլի 5-ին ձեռքբերված բանավոր պայմանավորվածությունից հետո ՌԴ հաջորդ կարևոր նախաձեռնությունը պետք է համարել 2016 թ. հունիսի 20-ին Սանկտ-Պետերբուրգում կայացած Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների հանդիպումը:

Մանկտպետերբուրգյան հանդիպումը ամրագրել էր Վիեննայի գործընթացի արդյունքները և ի լրումն նախկինում ընդունված պայմանավորվածությունների համաձայնություն էր ձեռքբերվել ավելացնելու հակամարտության գոտում միջազգային դիտորդների թիվը: Նախագահները նշել էին իրենց կանոնավոր շփումների կարևոր նշանակությունը և պայմանավորվել շարունակելու դրանք նման ձևաչափով՝ ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի[8]: Ի տարբերություն Վիեննայի գործընթացի՝ հանդիպման արդյունքները համանախագահներին ներկայացվեց միայն հանդիպումից հետո: Սա ռուսական գործելաոճի առանձնահատկություններից էր, երբ հերթական անգամ համանախագահող պետություններին ցույց էր տրվել, որ միջնորդական գործունեության մեջ ծանրության կենտրոնն, այնուամենայնիվ Ռուսաստանում է [9]:

2016 թ. դեկտեմբերի 8-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Համբուրգում տեղի էր ունեցել Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումը: Դրան հաջորդել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների արտգործնախարարների հայտարարությունը, որն ընդունվել էր ԵԱՀԿ ԱԳ նախարարների 23-րդ խորհրդի շրջանակներում, որտեղ նշվել էր ուժի և ուժի սպառնալիքի կիրառումից հրաժարվելու, ինչպես նաև նաև ռազմական լուծումը բացառելու ուղին: Համբուրգյան հայտարարության մեջ հղում էր արվել Վիեննայի և Սանկտ-Պետերբուրգի գազաթափոցների պայմանավորվածություններին, ինչպես նաև միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին[10]:

Հատկանշական է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կողմից Ապրիլյան պատերազմի և հետապրիլյան շրջանի տարածած բոլոր հայտարարություններում և հակամարտ կողմերի զսպմանն ուղղված գործելակերպում տեղ են գտել մասնավորապես՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման և հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքները: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները առանձին հայտարարություններում և նախաձեռնություններում հավատարիմ մնացին ընդունված սկզբունքներին ու մեխանիզմներին, ըստ այդմ՝ ստորև քննության են ենթարկվել յուրաքանչյուրի խոստաբանության սկզբունքները և կիրառած քաղաքական զսպման մեխանիզմներն առանձին ձևաչափում:

***Ուժի կամ ուժի չկիրառման և հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքը Ռուսաստանի Ղաշնույթյան կողմից ձեռնարկված միջնորդության քայլերում***

Հակամարտության կարգավորման գործընթացում ՌԴ հանդես է գալիս թե՛ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում և թե՛ առանձին դերակատարությամբ: ՌԴ միջնորդությունը հիմնավորվում է հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրվածությամբ, տարածաշրջանային ազդեցության ամրապնդմամբ, ինչպես նաև հակամարտող կողմերի նկատմամբ սեփական քաղաքական ազդեցության սահմանմամբ: Ըստ այդմ՝ ռուսական արտաքին քաղաքականության նոր հայեցակարգն առաջնահերթում է առաջատար ուժային կենտրոնների փոխգործակցությունը որպես հիմք՝ համատեղ լուծելու գլոբալ պրոբլեմները[11]: Հատկանշական է, որ փոխգործակցության ետնախորքում Ռուսաստանն առաջ է մղում զերտերության հակակշռման մեխանիզմները. ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը հերթական հարթակն է ռուսական կողմի համար հակակշռման մեխանիզմներ կիրառելու մյուս համանախագահների հատկապես ԱՄՆ համանախագահության նկատմամբ: ՌԴ դերակատարությունը պայմանավորված է նաև տարածաշրջանային իրողությունների և հիմնախնդիրների խորքային տեղեկացվածությամբ, հետևաբար ունի մեռյալ կետից իրողությունները տեղաշարժելու միտում: Ինչպես հակամարտության կարգավորման բոլոր փուլերում, այնպես էլ 2016 թ. սրման նոր փուլում ՌԴ ներգրավվածությունը շարունակվեց թե՛ Ապրիլյան պատերազմի և թե՛ հետապրիլյան քաղաքական զարգացումների ընթացքում:

Հատկանշական է, որ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտ գորքերի շփման գծում լարվածության առիթով ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կողմերին կոչ էր արել անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և զսպվածություն ցուցաբերել: Դրան հետևել էր ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի ապրիլի 2-ի հեռախոսազրույցը Ադրբեջանի և Հայաստանի արտգործնախարարների հետ՝ հորդորելով նրանց ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները բռնությանը վերջ դնելու ուղղությամբ[12]: ՌԴ արտգործնախարարության խոսնակ Մարիա Զախարովան ապրիլի 2-ին հանդես էր եկել հայտարարությամբ, որով արտահայտում էր Մոսկվայի մտահոգությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում լուրջ սրվածության կապակցությամբ և կողմերին կոչ անում զսպվածություն ցուցաբերել[13]: 2016թ. ապրիլի 4-ին Սերգեյ

Լավրովը հեռախոսազրույց էր ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի հետ, որի ժամանակ նրանք համաձայնել են ակտիվացնել Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ջանքերը որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Լեոնային Ղարաբաղի հակամարտության շուրջ: Նրանք դատապարտել են արտաքին ուժերի փորձերը Ղարաբաղում հակամարտության սրմանը հասնելու նպատակով[14]: Ապրիլի 5-ին նախագահ Վլ.Պուտինը հեռախոսազրույցներ էր անցկացրել Իլիամ Ալիևի և Սերժ Սարգսյանի հետ կողմերին կոչ անելով անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և հարգել հրադադարի ռեժիմը: Նա նաև նշել էր, որ Ռուսաստանը կշարունակի իրականացնել միջնորդական առաքելությունը իրավիճակը կայունացնելու նպատակով: ՌԴ նախագահն ընդգծել էր պաշտոնական Երևանի և Բաքվի միջև բանակցությունները վերսկսելու անհրաժեշտությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում[15]:

Հատկանշական է, որ բրիտանական «Reuters» լրատվամիջոցը «Ռուսաստանը որպես Լեոնային Ղարաբաղի հակամարտության հիմնական միջնորդ» վերնագրով հոդվածում ընդգծում էր Ռուսաստանի դերը հրադադարի համաձայնության հասնելու գործում: Նշվում է նաև, որ հակամարտությունը Հարավային Կովկասում՝ ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում վտանգ է առաջացրել, որտեղ, Ռուսաստանին շրջանցելով, Կասպիական ավազանից վառելիք և բենզին է տեղափոխվում համաշխարհային շուկաներ, կարող է պատերազմ վերսկսվել[16]:

ՌԴ արտգործնախարարի կողմից տրված հարցազրույցներում մյուս կողմից ակնհայտ էր նաև ՌԴ դերը շեշտելու ոճը. «Մենք գտնվում ենք կողմերի մեջ մշտական կապի մեջ: Նախագահ Պուտինը անձամբ է ստանձնել այդ գործը, երբ տեղի է ունեցել բռնկումը: Ես անձամբ մի քանի անգամ հեռախոսազրույց եմ ունեցել իմ գործընկերների հետ : Մենք խոսել ենք ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի հետ, քանի որ Ռուսաստանը, ԱՄՆ և Ֆրանսիան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետություններ են, որոնք զբաղվում են լեոնային-ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ: Մենք այդ հարցը քննարկել ենք Մոսկվայում Ժ.Մ.Էյրոյի հետ, Ֆրանսիայի արտգործնախարարի հետ, ով այդ «եռյակի» մի մասն է...»[17]:

***Փաստորեն, հակակշիռ գործողություններով հանդերձ Ռուսաստանին է պատկանում միջնորդական առաքելության մեջ շարժիչ ուժը կամ մեռյալ կետից իրողությունները թարմացնելու դերը: Ապրիլյան և հետապրիլյան քաղաքական-դիվանագիտական գործընթացներում Ռուսաստանը պաշտպանել էր միջազգային իրավունքի ուժի և ուժի չկիրառման սպառնալիքի, ինչպես նաև հակամարտությունների խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները:***

#### ***ԱՄՆ-ը համանախագահության գործուն քայլեր.***

2016 թ. ԱՄՆ ներգրավվածությանը սիրիական ճգնաժամում և կենտրոնացումը նախապատրաստվող նախագահական ընտրություններին ծանրակշիռ նախապայմաններ էին համանախագահ երկրի համար բավարարվելու համանախագահության ներսում իր ստանձնած միջնորդական առաքելության գործառույթներով: Ապրիլյան աննախադեպ լարվածության առիթով չէր ուշացել նաև ԱՄՆ արձագանքը. պետքարտուղար Ջոն Քերիին /2016թ. ապրիլ/ դատապարտել էր Լեոնային Ղարաբաղի շփման գծի ողջ երկայնքով հրադադարի կոպիտ խախտումները, որոնք բերել էին մեծ կորուստների, ընդ որում նաև խաղաղ բնակչության շրջանում: Նա կողմերին կոչ էր արել զսպվածություն ցուցաբերել, խուսափել հետագա սրումից և անվերապահորեն հավատարիմ մնալ հրադադարի ռեժիմի պահպանմանը: Նա կողմերին կոչ էր արել վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո և վերահաստատել, որ հակամարտությունը ռազմական լուծում չունի: Նա վերահաստատել է նաև ԱՄՆ որպես համանախագահող երկրի պատրաստակամությունը՝ բանակցելու կողմերի հետ և հասնելու հակամարտության տևական կարգավորմանը[18]:

Իր հերթին ԱՄՆ Պետդեպարտամենտի տեղեկատվության ծառայության պետ Ջոն Կիրբին մեկնաբանելով հակամարտության շուրջ ծավալված գործընթացը Վիեննայում սկսված հանդիպման մասին մասնավորապես նշել էր, որ ԱՄՆ-ը միշտ էլ հետաքրքրված է եղել լեոնային-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման լուծման ճանապարհներով, ռազմական գործողությունների դադարեցմանը՝ «քաղաքական երկխոսության ճանապարհով»[19]: Վիեննայի հանդիպման նախաձեռնությունը ստանձնելուց հետո, հատկանշական է, որ համանախագահությամբ ստանձնած իր գործառույթներով պայմանավորված ԱՄՆ հանդես էր եկել նաև պատրաստակամությամբ հերթական հանդիպումը կազմակերպելու: Մասնավորապես

հուլիսին կայացած հեռախոսազրույցում ընդգծելով լարվածության թուլացումը, Ջ. Քերին շեշտել էր ԱՄՆ պատրաստակամությունը Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում լուրջ բանակցություններ կազմակերպելու հիմնախնդրի համապարփակ կարգավորման նպատակով[20]: Չնայած Մանկտայետերբորգյան հանդիպումից հետո հայտարարության ենթատեքստը հարվածում էր մինչ այդ ռուսական կողմի միջնորդական նախաձեռնություններին, այնուամենայնիվ, սա պետք է դիտել որպես ԱՄՆ կողմից տարածաշրջանային հետաքրքրությունների վերաթարմացման միջոց և հիմնախնդրում Ռուսաստանի ջանքերն ինչ-որ իմաստով նսեմացնելուն ուղղված հայտարարություն: Ապրիլյան ռազմական իրողություններում ԱՄՆ կողմից արտահայտված դիրքորոշումն իր ազդեցությունն ունեցավ նաև ՆԱՏՕ-ի դիրքորոշման վրա. մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը հայտարարել էր, որ Վարշավայի խորհրդաժողովի լիագումար կոմյունիկեում կետ է մտցվել դարաբաղյան կարգավորման մասին, իսկ ապրիլի 5-ի հայտարարությամբ ողջունել էր հրադադարի բանավոր պայմանավորվածության ձեռքբերումը և կողմերին հորդորել հավատարիմ մնալ հրադադարի պահպանմանը, ցուցաբերել զսպվածություն և խուսափել նոր սրումից: Հայտարարության մեջ նշվում էր, որ ՆԱՏՕ-ն աջակից է ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին, ինչպես նաև վերահաստատվում էր, որ կողմերը պետք է վերադառնան բանակցությունների սեղանի շուրջ և հակամարտության համապարփակ կարգավորման հասնեն Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո, քանի որ հակամարտությունը ռազմական լուծում չունի[21]:

*Հատկանշական է, որ մինչապրիլյան շրջանում ՆԱՏՕ-ի դիրքորոշումը հիմնախնդրի նկատմամբ տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառումից այն կողմ չէր անցնում: Սա նաև Ռուսաստանի կողմից կարգավորման միայնակ նախաձեռնություններին հակակշիռ հայտարարություն էր, և ի դեմս ՆԱՏՕ-ի այստեղ պետք է տեսնել ԱՄՆ-ի կողմից հակակշիռ գործողություն[22]:*

*Հակամարտության կարգավորման այս փուլում ԱՄՆ դիրքորոշումը փաստորեն տարածվել էր նաև ՆԱՏՕ-ի դիրքորոշման վրա, ինչն արտահայտվել էր խաղաղ կարգավորման սկզբունքի շեշտադրմամբ:*

*Ֆրանսիան որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ Ապրիլյան պատերազմի զսպմանն ուղղված գործընթացներում.*

2016 թ. Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության լարվածության առաջին իսկ օրը Ֆրանսիան հանդես եկավ խաղաղության կոչերով: Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը նշել էր, որ չկա այլընտրանք հակամարտության խաղաղ կարգավորմանը և վերահաստատել էր հակամարտության խաղաղ կարգավորմանը իր հավատարմությունը[23]:

Ֆրանսիայի արտաքին գործերի և միջազգային զարգացման խոսնակը ապրիլի 2-ին հանդես էր եկել հայտարարությամբ, որում կոչ էր արել կողմերին հետևել հրադադարի ռեժիմի պայմանավորվածություններին և վերադառնալ բանակցությունների սեղան[24]:

Ֆրանսիական պաշտոնական տեսակետը ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության սրումը չէր կապում տարածաշրջանային արտաքին գործոնների հետ: Հարկ է նշել, որ ապրիլի 2-ին և 5-ին Ֆրանսիան կոչ էր անում չուշացնել բանակցությունները խաղաղ լուծումը գտնելու համար[25]: Ֆրանսիայի մասնակցությունը Վիեննայի մայիսի 16-ի «3+2» հանդիպմանը առիթ էր ֆրանսիական կողմի համար հերթական անգամ վերահաստատելու իր դիրքորոշումը հիմնախնդրի նկատմամբ, մասնավորապես Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում նշվում էր, որ Ֆրանսիան ողջունում է խորհրդակցության արդյունքները Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում, ինչը նպաստում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկխոսությանը՝ ապրիլի 2-5-ը բախումներից հետո[26]: 2016 թ. հուլիսի 5-ի հաղորդագրության մեջ Ֆրանսիան հայտարարել էր, որ պատրաստ է կողմերի հերթական հանդիպումն անցկացնելու Ֆրանսիայում: Սա դիտվում է համանախագահող երկրի պարտականություն և նախաձեռնության դրսևորում:

<sup>1</sup> Բաղդասարյան Ն., Արտաքին հակակշռումների դրսևորումները ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության սրման նոր փուլում /2016 թ. ապրիլ-հունիս/, Արցախի անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 29-30:

Ադրբեջանա-դարաբադյան հակամարտության կարգավորման հարցում ֆրանսիական կողմի դերակատարությունը և հիմնախնդրին տեղեկացվածության մակարդակը խիստ կարևորվում է որպես համանախագահ երկիր: Փաստորեն, ապրիլյան և հետապրիլյան քաղաքական զարգացումներում ֆրանսիական կողմի դիրքորոշման հիմնական շեշտադրումներն արված են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման և հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքներին:

***Բ. Տարածքային ամբողջականության սկզբունքի շեշտումը ադրբեջանա-դարաբադյան հակամարտության կողմերին ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրների հայտարարություններում.***

***ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամության շրջանակներում թուրքական դիրքորոշման հիմնակետը Ապրիլյան ռազմաքաղաքական գործընթացներին.***

Հակամարտության սրման նոր փուլում Թուրքիայի դիրքորոշումն առանձնացավ ակտիվությամբ և միջնորդության անուղղակի կոչերով՝ պայմանավորված 2015-2016 թթ. ռուս-թուրքական լարված միջազգային հարաբերություններով, ենթատեքստում ենթադրելով ինչպես Ադրբեջանին սատարելու, այնպես էլ Ռուսաստանին հակակշիռ գործողություններ: Հակամարտության սրումը թուրքական կողմը դիտեց մի կողմից որպես տարածաշրջանային դերակատարության վերաթարմացման միջոց, մյուս կողմից սիրիական ճգնաժամում իր բացասական կերպարը վերացնելու նպատակ:

Թուրքական կողմի դիրքորոշումն առանձնացավ Ադրբեջանին սատարելու շեշտադրումներով. Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիբ Էրդողանը իր հայտարարության մեջ նշել էր, որ Թուրքիան մինչև վերջ կանգնած կլինի Ադրբեջանի կողքին և ավելացրել, որ «...մենք առերեսվում ենք նման դեպքերի, քանի որ ԵԱՀԿ Մինսկի խումբը տարիներ շարունակ թերագնահատել է Լեռնային Ղարաբաղում կուտակված իրավիճակը: Եթե Մինսկի խումբը արդար և վճռական քայլեր ձեռնարկեր, նման դեպքերը բացահայտված կլինեին: Այնուամենայնիվ Մինսկի խմբի թուլությունը դժբախտաբար բերել է իրավիճակի նման սրման: Թող Ալլահը պահպանի լինի Ադրբեջանի մեր եղբայրներին» [27]:

Թուրքիայի ԱԳՆ-ը հայտնել էր, որ Անկարան աջակցում է Բաքվի գործողություններին, դատապարտել Հայաստանի կողմից Ադրբեջանի դեմ սանձազերծված հրետանային գնդակոծությունը, որ բերել էր խաղաղ բնակչության շրջանում զոհերի, կոչ էր արել Հայաստանին պահպանել հրադադարի ռեժիմը եւ վերջ դնել ռազմագործողություններին: «Հայաստանը մոտ 25 տարի է, ինչ բռնազավթել է Ադրբեջանի տարածքի մեկ հինգերորդ մասը: Եթե այս բռնազավթմանը վերջ չդրվի եւ Հայաստանը չհրաժարվի իր ագրեսիվ կեցվածքից, նման բախումների հավանականությունը, դժբախտաբար, տևական կլինի: Այս առումով մենք վերահաստատում ենք մեր կոչը Հայաստանին խաղաղ ճանապարհով վերջ դնել օկուպացիային՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի: Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, որ հիմնվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման նպատակով, Թուրքիան կշարունակի աջակցել Ադրբեջանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության շրջանակներում հակամարտության արդարացի եւ տևական լուծմանն ուղղված ջանքերին» [28]: Հատկանշական է, որ Ապրիլյան պատերազմում Թուրքիայի դիրքորոշումը հաստատուն չէր՝ պայմանավորված թուրքական արտաքին քաղաքական առաջնահերթություններով [29]:

***Տարածքային ամբողջականության շեշտումը ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ Բելառուսի Հանրապետության դիրքորոշման մեջ.***

Ապրիլյան պատերազմի առաջին արձագանքների շարքում էր Բելառուսի Հանրապետության արձագանքը. նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կողմերին երկխոսության կոչ էր արել: Նա հիմնախնդրի քննարկման նպատակով հեռախոսազրույցներ է ունեցել Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահների հետ: Ալեքսանդր Լուկաշենկոն մտահոգություն էր հայտնել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ գործերի շփման գծում ընթացող մարտերի առնչությամբ [30]: Հակամարտության առիթով 2016 թ. ապրիլի 2-ին Բելառուսի արտգործնախարարության հայտարարությամբ շեշտադրում արվեց այն հանգամանքին, որ «...լինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկիր Բելառուսը հանդես է գալիս հակամարտության խաղաղ կարգավորման օգտին՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, առաջնահերթելով՝ պետությունների ինքնիշխանության, տարածքային



ամբողջականության և սահմանների անխախտելիության, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և ԵԱՀԿ համապատասխան որոշումները» [31]: Բելառուսի Հանրապետության դիրքորոշումը բացատրելի է Ադրբեջանի հետ քաղաքական-տնտեսական ամուր կապերով:

**Տարածքային ամբողջականության սկզբունքի շեշտումը այլ պետությունների կողմից:**

***Ուկրաինայի դիրքորոշումը ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության սրման նոր փուլում:***

Ադրբեջանին սատարող կոչերում պետք է ընդգծել նաև ուկրաինական արձագանքը: Մասնավորապես Ուկրաինայի արտգործնախարարության հայտարարության համաձայն Ուկրաինան խորը մտահոգություն է հայտնել Լեոնային Ղարաբաղում իրավիճակի սրման կապակցությամբ կոչ անելով բոլոր կողմերին, ինչպես նաև միջազգային հանրությանը՝ հանձինս ԵԱՀԿ ՄԽ համանախագահների ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հակամարտության գոտում իրավիճակի կայունացման ուղղությամբ, ակտիվացնել Լեոնային Ղարաբաղում իրավիճակի կարգավորմանն ուղղված բանակցությունները: Ուկրաինական դիրքորոշման մեջ ընդգծվում էր Լեոնային Ղարաբաղի հակամարտության տևական քաղաքական լուծման անհրաժեշտությունը, որի հիմքում ընկած կլինեն Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքները՝ Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակներում [32]: Ուկրաինական արձագանքը տվյալ դեպքում պայմանավորված էր ռուս-ուկրաինական լարված հարաբերություններով և ուկրաինական կողմի՝ ռուսական կողմին ուղղված տարածքային ամբողջականության խախտման ուղերձ-մեղադրականով:

***Տարածքային ամբողջականության փաստը շեշտվել էր նաև Պակիստանի դիրքորոշման մեջ:***

Պակիստանի արտգործնախարարությունը հանդես էր եկել հայտարարությամբ, որում մեղադրել է Հայաստանին՝ «շարունակական հրետանային գնդակծության» միջոցով «հրադադարի ռեժիմը խախտելու» համար: Նշվել է նաև, որ «Պակիստանը միշտ կանգնած է եղբայրական եւ բարեկամ Ադրբեջանի կողքին» [33]:

***Հակամարտող կողմերի գործելակերպի դրսևորումները հակամարտության զսպման վերոնշյալ մեխանիզմների նկատմամբ***

- Ապրիլյան պատերազմում Ադրբեջանի գործելակերպը հակասում էր ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետին, որը սահմանում է. «Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից» [34]: Այս դեպքում՝ Ադրբեջանի միանգամայն ակնհայտ նախահարձակության դեպքում առկա է նաև ադրբեջանական կողմի որպես հակամարտող պետության ուժի կիրառման պատասխանատվությունից հրաժարվելու փորձ, որը մասնավորապես արտահայտվեց հետևյալում. ՄԱԿ-ի անդամ պետություն համարվող Ադրբեջանը սանձազերծելով պատերազմ խախտել էր 1994 թ. Հրադադարի մասին Եռակողմ համաձայնագիրը, իսկ 2016 թ. ապրիլի 11-ին ԵԱՀԿ-ում իր Մշտական ներկայացուցչությանն ուղղված դիմումով հայկական կողմի վրա էր բարդվել ռազմական գործողություններ սկսելու պատասխանատվությունը՝ միաժամանակ նաև շեշտադրվել, որ դրանով իր ուժը կորցնում է 1994 թ. հրադադարի մասին Համաձայնագիրը հետևաբար կողմերի՝ Հայաստանի և Ադրբեջանի համար հիմք պետք է ընդունվի 2016 թ. ապրիլի 5-ին ընդունված երկկողմ բանավոր համաձայնությունը [35]:

- Հետապրիլյան քաղաքական իրողություններում ադրբեջանական կողմի դիրքորոշման հիմնաքարը Վիեննայի պայմանավորվածություններից հետ կանգնելն էր և այդ առիթով ծավալված դիվանագիտական խուսանավման քաղաքականությունը: Վիեննայի հանդիպումը վերջ էր դրել ապրիլյան քառօրյա պատերազմից հետո 1994 թ. զինադադարից հեռանալու և պատերազմից հետո ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունը հիմք ընդունելու ադրբեջանական կողմի քայլերին:

- 2016-2017 թթ. ընթացքում ԵԱՀԿ-ին, ՄԱԿ-ին ուղղված ադրբեջանական դիմումների էությունն արտահայտում էր հակամարտ կողմի կարծրացած սկզբունքները: Մասնավորապես՝ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի ընդլայնման և հրադադարի ռեժիմի խախտումներն արձանագրող մեխանիզմների վերջնականացման հարցում Ադրբեջանը առաջ էր քաշել հայկական ուժերի դուրս բերման հարցը որպես նախապայման:

- Ադրբեջանը հետ էր կանգնել գորքերի շփման գծում ԵԱՀԿ դիտորդների տեղակայման պայմանից՝ պատճառաբանելով, որ նախքան հայկական զինված ուժերի դուրսբերումը դա կարող է նպաստել ստատուս-քվոյի ամրապնդմանը և հակամարտության ձգձգմանը: Փաստորեն, Ադրբեջանն իր նախապայմանները չկատարելու պատճառները արհեստականորեն պայմանավորել էր հայկական կողմի գործելակերպով: Հատկանշական է, որ հայկական կողմի գործելակերպը որևէ կերպ չէր հակասում ինչպես նախկինում, այնպես էլ հակամարտության սրման նոր փուլին հետևած քաղաքական-դիվանագիտական գործիքակազմին: Հայկական կողմի այս գործելակերպն ապացուցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ընդունված ձևաչափերին հավատարմության փաստը:

- Վիեննայի հանդիպումը հակամարտության խաղաղ կարգավորման նախապայմանը տեղափոխեց քաղաքական-տեխնիկական դաշտ, ինչը, չնայած ադրբեջանական կողմի հետագայում ձեռնարկած հակաքայլերին՝ խոսույթի մակարդակից կիրառական մակարդակ տանելու ընթացքում հակամարտող կողմերին բանակցելու եզրերի և բևեռացումը մեղմելու հնարավորություն պետք է դիտարկել: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ գործնականում մշտադիտարկումը շարունակում է իրականացվել կողմերի ռազմատեխնիկական սարքավորումների միջոցով, ըստ այդմ երաշխիքային հիմքեր չեն ձևավորվել շփման գծում միջադեպերի կամ լարվածության դեպքերը հրապարակելու և օբյեկտիվ հետաքննության համար հիմք ընդունելու համար:

- Ապրիլյան պատերազմը ադրբեջանական կողմի ջանքերով տեղափոխվել էր նաև Իսլամական համագործակցության կազմակերպության շրջանակներ՝ ձևավորվելով ***տարածքային ամբողջականության սկզբունքի արտահայտման կրոնաքաղաքական հարթակ***: Մասնավորապես կազմակերպության գլխավոր քարտուղար Իյադ Էմին Մեդենին անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը եւ խորը մտահոգություն հայտնել հակամարտության սրման առնչությամբ, որն «արդյունք է Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների տևական օկուպացման»: Մեդենին վերահաստատել է Իսլամական համագործակցության կազմակերպության սկզբունքային դիրքորոշումը, որով դատապարտում է Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ: Կազմակերպությունը նշել է, որ անթույլատրելի են ռազմական գործողությունները և կոչ է արել Հայաստանին «անհապաղ դուրս բերել ՀՀ զինված ուժերը ԼՂՀ-ից և դրան հարակից տարածքներից՝ ընդգծելով Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը հարգելու անհրաժեշտությունը» [36]: Հատկանշական է, որ 2016 թ. Ստամբուլում ապրիլի 13-15-ը կայացած Իսլամական համագործակցություն կազմակերպության 13-րդ համաժողովի 16 և 17-րդ կետերն ամբողջապես վերաբերում էին ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությանը, մասնավորապես այն դիտվում էր որպես ագրեսիա Հայաստանի կողմից, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 4 բանաձևերի չկատարում, Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտում, Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների օկուպացում, հետևաբար՝ Ադրբեջանը պատասխան պաշտպանական գործողություններով պաշտպանում է հավատացյալ ժողովրդի անվտանգությունը: Համաժողովը գտնում էր, որ պետք է ստեղծել կոնտակտային խումբ ԻՀԿ արտգործնախարարների մակարդակով, որ կուսումնասիրի Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի դեմ և այն կքննարկի Ստամբուլի առաջիկա զագաթաժողովում [37]:

***Նման տարրեր պարունակող հայտարարության վտանգավորության մակարդակը բավականին բարձր է՝ այն դիտարկելով աշխարհում առկա կրոնաքաղաքական հակամարտությունների համատեքստում, քանի որ խնդիրն արհեստականորեն տեղափոխվել է կրոնաքաղաքական ոլորտ: Մյուս կողմից այն ամբողջությամբ արտահայտում է Ադրբեջանում առկա հայատյացության ահագնացող մթնոլորտը, հետևաբար սա պետք է դիտել նաև Ադրբեջանի կողմից գործադրված ջանքերի արդյունք:***

- Ապրիլյան պատերազմում հետապնդած ադրբեջանական կողմի գլխավոր նպատակը, ինչպես վերը նշվեց, երևան է գալիս 2016 թ. ապրիլի 5-ի բանավոր համաձայնությունից հետո: Ադրբեջանի այս քայլերն կանխվեցին հայկական կողմի ջանքերի շնորհիվ, որոնց արդյունքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները, ՄԱԿ-ում և ԵԱՀԿ-ում շրջանառեցին համապատասխան հայտարարագրեր, որոնցում շեշտվում էր, 1994-1995 թթ. զինադադարի

համաձայնագրերի անժամկետայնությունը և պարտադրանքն ուղղված կողմերին՝ խստորեն հարգելու դրանք[38]:

- Մյուս կողմից հայկական կողմը գնահատելով ստեղծված իրավիճակում ադրբեջանական ուղերձների վտանգի մակարդակը հակաքայլեր էր ձեռնարկել: ՀՀ արտգործնախարարության հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր . «Հայաստանը խստորեն դատապարտում է 1994թ. մայիսին Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև զինադադարի մասին անժամկետ եռակողմ համաձայնագիրը կասկածի տակ դնելու Ադրբեջանի ապարդյուն փորձերը, ինչը վտանգավոր քայլ է և սպառնում է առավել ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանում: Ապրիլի սկզբին Ադրբեջանի կողմից ագրեսիվ ռազմական գործողությունների սանձազերծումը ոչ թե հանգեցնում է զինադադարի համաձայնագրի գործողության դադարեցմանը, այլ բերում է համաձայնագիրը խախտող կողմի պատասխանատվությանը» [39]:

Փաստորեն, չնայած ադրբեջանական կողմի հակաքայլերին, այնուամենայնիվ, այլընտրանքի հնարավորություն չի դիտարկվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ-պետությունների հետևողական ազդեցությանը՝ հաշվի առնելով կարգավորման այն սկզբունքները, որոնք առկա են Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարություններում:

***Քննելով միջազգային իրավունքի նշյալ սկզբունքների արտահայտումը սպրիլյան և հետապրիլյան իրողություններում և հակամարտող կողմերի վերաբերմունքը ձեռքբերված համաձայնություններին, անհրաժեշտություն է առաջանում ամբողջացնելու դրանց արդյունքները***

- Ապրիլյան և հետապրիլյան քաղաքական իրողություններում համանախագահ պետությունները և ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրները որպես հակամարտող կողմերին զսպող մեխանիզմներ դիմեցին կարգավորման ընթացքում ձևավորված միջազգային իրավունքով ամրագրված հիմնարար սկզբունքներին: Հատկանշական է, որ որոշ դեպքերում այն ունեցավ սաստիչ շեշտադրումներ՝ ուղղված ադրբեջանական կողմի նախահարձակ և պայմանավորվածությունների սեղանից դուրս ձեռնարկված քայլերին: Հակամարտության վերահսկման տեխնիկական գործիքակազմը շարունակեց թերի մնալ կապված ադրբեջանական կողմի քաղաքականության հետ:

- 1994 թվականի զինադադարի հաստատումից հետո Ապրիլյան պատերազմը աննախադեպ լարվածության դրսևորում էր, հետևաբար՝ առաջնային տեղը տրվեց խաղաղաշինական մեխանիզմներին՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը Ապրիլյան պատերազմի և հետապրիլյան քաղաքական զարգացումների համատեքստում դիտվել է որպես հրատապ խնդիր հակամարտության լարվածության հետագա մակարդակը կանխելու կամ նվազեցնելու առումով: Ըստ այդմ՝ խաղաղաշինությանն ուղղված կոչերում գերակա էր հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքը: Այն ունեցավ քաղաքական-դիվանագիտական զսպման կանխատեսելի ազդեցություն, ինչը չի կարելի ասել առաջարկված տեխնիկական զսպման գործիքակազմի մասին:

- Ինչ վերաբերում է տարածքային ամբողջականության սկզբունքին, ապա այս դիրքորոշումը բարձրաձայնեցին Ադրբեջանին սատարող պետությունները, ինչը ևս պատահական չէ, քանի որ միջազգային իրավունքի այս սկզբունքը, որ համահավասար հարթակում է մյուս հիմնարար սկզբունքներին, ադրբեջանական կողմը յուրացրել է տարածքային ամբողջականության խախտումն ուղիղ համեմատականով նույնացնելով այսպես կոչված «1991-1994 թթ. ՀՀ կողմից օկուպացված Ադրբեջանի տարածքային կորուստների հետ»: Հատկանշական է, որ Ադրբեջանը տարածքային ամբողջականության խախտման դեպք ունի հենց Արցախի Հանրապետության նկատմամբ՝ կապված Հյուսիսային Արցախի մի շարք տարածքների բռնագավթման փաստի հետ: Տարածքային ամբողջականության հարցում վիճելի հարցերը պատճառ են, որ այն առավել զգուշավոր կիրառություն գտներ, չնայած այն հանգամանքին, որ կարգավորման ընդունված սկզբունքային համակարգում միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները հավասար են և չեն դիտարկվում մեկը մյուսի նկատմամբ գերակայության ձևաչափում:

- Հայաստանի և Արցախի հանրապետությունների խնդիրն է միջազգային հանրությանն ապացուցել, որ տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող գործել կողմերից մեկի օգտին, առավել ևս, որ թե՛ Ադրբեջանը և թե՛ Արցախը իրենց անկախությունը հռչակել են ԽՍՀՄ կազմից ինքնորոշման իրավունքով դուրս գալու միջոցով: Հետևաբար պետք է հենվել նաև այն փաստարկի վրա, որ անկախության հռչակումից հետո Ադրբեջանը երբևէ չի տիրել Արցախի Հանրապետությանը: Պետք է հատկանշել նաև այն հանգամանքը, Ադրբեջանի Հանրապետությունը հրաժարվել է Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից՝ հայտարարելով իրեն Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ:

- Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտման սկզբունքն առաջնահերթող պետությունների դիրքորոշման մեջ Հայաստանի Հանրապետությունը ներկայացվում է որպես հակամարտող կողմ: Այս հանգամանքը՝ դրանից բխող վտանգավոր հետևանքներով հանդերձ հրատապության հերթական մակարդակն է հաղորդում բանակցային գործընթացում առկա իրավիճակին և պարտադրում հակամարտության կարգավորմամբ զբաղվող միջազգային կառույցին ապահովելու Արցախի Հանրապետության վերադարձը բանակցային սեղան:

- Հատկանշական է այն հանգամանքը, որ եթե տարածքային ամբողջականության թեզն օգտագործվել էր Ադրբեջանին սատարելու նպատակով, ապա դրան հակադիր ձևավորվել էր մեկ այլ գործընթաց, մասնավորապես՝ աննախադեպ կերպով սկսել է քննարկվել Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հարցը, ինչն ադրբեջանական կողմի դիվանագիտական լուրջ կորուստը պետք է համարել: Ադրբեջանը միջազգային հանրությանը փորձում է ապացուցել, որ Հայաստանի Հանրապետությունը խախտել է իր տարածքային ամբողջականությունը: ՀՀ կողմից Արցախի Հանրապետության ճանաչման հարցի քննարկումը Ապրիլյան պատերազմի օրերին բավարար ուղերձ է միջազգային հանրությանը, որ Հայաստանի Հանրապետությունը Արցախի Հանրապետության բնակչության անվտանգության, ինչպես նաև նրա ինքնորոշման իրավունքի իրացման երաշխավորն է:

Վերը նշվածից բխեցնելով պետք է ասել, որ հետապրիլյան քաղաքական գործընթացներում միջազգային հանրության ուղերձներում առկա են հստակ շեշտադրումներ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի սկզբունքին:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Conference on security and co-operation in Europe, Final act, Helsinki, 1975.
2. Press Release by the Co-Chairs of the OSCE Minsk Group, 02.04.2016 (<http://www.osce.org/mg/231216>)
3. OSCE Chairperson-in-Office Steinmeier expresses concern over developments in Nagorno-Karabakh conflict zone, 02.04.2016 (<http://www.osce.org/cio/231221>)
4. Statement by Representatives of the OSCE Minsk Group countries, 05.04.2016 (<http://www.osce.org/mg/231386>)
5. OSCE participating States discuss recent escalation in Nagorno-Karabakh conflict zone, 05.04.2016 (<http://www.osce.org/cio/231431>)
6. Հանդիպում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, 07.04.2016 (<http://www.president.nkr.am/am/news/workingMeetings/3143/>)
7. Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France, 16.04.2016 (<http://www.osce.org/mg/240316>)
8. Սանկտ-Պետերբուրգում Հայաստանի, ռուսաստանի և Ադրբեջանի նախագահները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, 20.06.2016 (<http://www.president.am/hy/press-release/item/2016/06/20/President-Serzh-Sargsyan-meeting-with-Presidents-o-Russia-Azerbaijan/>)  
Совместное заявление президентов Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации по нагорнокарабахскому урегулированию, 20.06.2016 (<http://kremlin.ru/supplement/5093>)
9. Բաղդասարյան Ն., Արտաքին հակակշռումների դրսևորումները ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության սրման նոր փուլում /2016 թ. ապրիլ-հունիս/, Արցախի անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, ԱրՊՀ հրատ., 2017, էջ 28-33:

10. ՀՀ արտաքին գործերի նախարարության 2016 թ. հաշվետվություն, [http://www.mfa.am/u\\_files/file/reports/MFA%20Annual%20Report%202016.pdf](http://www.mfa.am/u_files/file/reports/MFA%20Annual%20Report%202016.pdf)
11. Лавров анонсировал новую концепцию внешней политики России, 9.04.2016 (<https://lenta.ru/news/2016/04/09/national/>)
12. Press release on Foreign Minister Sergey Lavrov's telephone conversations with the foreign ministers of Azerbaijan and Armenia, 02.04.2016 ([http://www.mid.ru/en/foreign\\_policy/news/-/asset\\_publisher/cKNonkJE02Bw/content/id/2199353](http://www.mid.ru/en/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/2199353))
13. Statement by Russian Foreign Ministry Spokesperson Maria Zakharova on the events surrounding Nagorno-Karabakh, 02.04.2016 ([http://www.mid.ru/en/web/guest/foreign\\_policy/international\\_safety/conflicts/-/asset\\_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/2199325](http://www.mid.ru/en/web/guest/foreign_policy/international_safety/conflicts/-/asset_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/2199325))
14. Press release on Foreign Minister Sergey Lavrov's telephone conversation with US Secretary of State John Kerry, 04.04.2016 ([http://www.mid.ru/en/web/guest/telefonnye-razgovory-ministra/-/asset\\_publisher/KLX3tiYzsCLY/content/id/2207660](http://www.mid.ru/en/web/guest/telefonnye-razgovory-ministra/-/asset_publisher/KLX3tiYzsCLY/content/id/2207660))
15. Telephone conversations with Ilham Aliyev and Serzh Sargsyan, 05.04.2016 (<http://en.kremlin.ru/events/president/news/51644>)
16. Russia styles itself lead mediator in Nagorno-Karabakh conflict, 07.04.2016 <http://www.reuters.com/article/us-nagorno-karabakh/russia-styles-itself-lead-mediator-in-nagorno-karabakh-conflict-idUSKCN0X41Y6>
17. Интервью Министра иностранных дел России С. В. Лаврова МИА «Россия сегодня», Москва, 4 мая 2016 года ([http://www.mid.ru/web/guest/meropriyatiya\\_s\\_uchastiem\\_ministra/-/asset\\_publisher/xK1BhB2bUjd3/content/id/2267661](http://www.mid.ru/web/guest/meropriyatiya_s_uchastiem_ministra/-/asset_publisher/xK1BhB2bUjd3/content/id/2267661))
18. US Condemns Nagorno-Karabakh Violence, Urges Parties to Respect Ceasefire, 02.04.2016 (<https://sputniknews.com/politics/201604021037394080-us-nagorno-karabakh-violence/>)
19. Госдеп: режим прекращения огня в Нагорном Карабахе не соблюдается, 16 мая 2016 (<http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/3286540>)
20. Вашингтон призвал Армению и Азербайджан выполнять мирные обязательства, 1 июля 2016 (<http://www.interfax.ru/world/516356>)
21. Statement by the NATO Secretary General on Nagorno-Karabakh, 05.04.2016 ([http://www.nato.int/cps/in/natohq/news\\_129719.htm?selectedLocale=en](http://www.nato.int/cps/in/natohq/news_129719.htm?selectedLocale=en))
22. Բաղդադի Ե.Ն., Արտաքին հակակշռումների դրսևորումները ադրբեջանա-ղարաբայյան հակամարտության սրման նոր փուլում /2016 թ. ապրիլ-հունիս/, Արցախի անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 29-30:
23. Combats au Nagorno-Karabakh : Hollande appelle au cessez-le-feu, 02.04.2016 ([http://www.lepoint.fr/monde/poutine-appelle-au-cessez-le-feu-immediat-au-haut-karabagh-02-04-2016-2029534\\_24.php#xtmc=haut-karabakh&xtnp=1&xtcr=5](http://www.lepoint.fr/monde/poutine-appelle-au-cessez-le-feu-immediat-au-haut-karabagh-02-04-2016-2029534_24.php#xtmc=haut-karabakh&xtnp=1&xtcr=5))
24. Conflit du Haut-Karabakh – Appel au respect du cessez-le-feu (2 avril 2016) (<http://www.diplomatie.gouv.fr/fr/politique-etrangere-de-la-france/defense-et-securite/crises-et-conflits/haut-karabagh/evenements/article/conflit-du-haut-karabakh-appel-au-respect-du-cessez-le-feu-02-04-16>)
25. Arménie / Azerbaïdjan - Réunion "3+2" sur le Haut-Karabagh (Vienne, 16 mai 2016) (<http://www.diplomatie.gouv.fr/fr/politique-etrangere-de-la-france/defense-et-securite/crises-et-conflits/haut-karabagh/evenements/article/armenie-azerbaïdjan-reunion-3-2-sur-le-haut-karabagh-16-05-16>)
26. Conflit du Haut-Karabakh – Appel au respect du cessez-le-feu (2 avril 2016) (<http://www.diplomatie.gouv.fr/fr/politique-etrangere-de-la-france/defense-et-securite/crises-et-conflits/haut-karabagh>)
27. Turkey will support Azerbaijan to the end, 02.04.2016 (<https://www.tccb.gov.tr/en/news/542/41388/turkey-will-support-azerbaijan-to-the-end.html>)
28. Press Release Regarding the Clashes on the Line of Contact and on Azerbaijan-Armenia borderline, 02.04.2016 ([http://www.mfa.gov.tr/no\\_-82\\_-2-april-2016\\_-press-release-regarding-the-clashes-on-the-line-of-contact-and-on-azerbaijan\\_armenia-borderline.en.mfa](http://www.mfa.gov.tr/no_-82_-2-april-2016_-press-release-regarding-the-clashes-on-the-line-of-contact-and-on-azerbaijan_armenia-borderline.en.mfa))
29. Բաղդադի Ե.Ն., Արտաքին հակակշռումների դրսևորումները ադրբեջանա-ղարաբայյան հակամարտության սրման նոր փուլում /2016 թ. ապրիլ-հունիս/, Արցախի անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 31-32:
30. Telephone talks with presidents of Azerbaijan, Armenia, 02.04.2016 ([http://president.gov.by/en/news\\_en/view/telephone-talks-with-presidents-of-azerbaijan-armenia-13418/](http://president.gov.by/en/news_en/view/telephone-talks-with-presidents-of-azerbaijan-armenia-13418/))
31. Заявление Министерства иностранных дел Республики Беларусь в связи с событиями вокруг Нагорного Карабаха, 02.04.2016 ([http://mfa.gov.by/press/news\\_mfa/f4b5537bfd0626f.html](http://mfa.gov.by/press/news_mfa/f4b5537bfd0626f.html))

32. The Ministry of Foreign Affairs of Ukraine comment on the aggravation of Nagorno-Karabakh conflict, 05.04.2016 (<http://mfa.gov.ua/en/press-center/news/46250-the-ministry-of-foreign-affairs-of-ukraine-comment-on-the-aggravation-of-nagorno-karabakh-conflict>)
33. Pakistan expresses concern over escalation in Nagorno-Karabakh, 05.04.2016 (<http://www.mofa.gov.pk/pr-details.php?mm=MzYyMQ,,> )
34. ՄԱԿ-ի կանոնադրություն, 2-րդ հոդված, 4-րդ կետ/հայերեն թարգմանություն/
35. ՀՀ արտաքին գործերի նախարարության 2016 թ. հաշվետվություն, ([http://www.mfa.am/u\\_files/file/reports/MFA%20Annual%20Report%202016.pdf](http://www.mfa.am/u_files/file/reports/MFA%20Annual%20Report%202016.pdf))
36. The OIC following with deep concern the Armenian acts of aggressions against Azerbaijan, 03.04.2016 ([http://www.oic-oci.org/topic/?t\\_id=11059&ref=4350&lan=en](http://www.oic-oci.org/topic/?t_id=11059&ref=4350&lan=en))
37. Final Communique Of The 13th Islamic Summit Of The Heads Of State/Government Of The OIC Member States, 15.04.2016, ([http://www.oic-oci.org//topic/?t\\_id=11093&t\\_ref=4364&lan=en](http://www.oic-oci.org//topic/?t_id=11093&t_ref=4364&lan=en))
38. Նույն տեղում:
39. ՀՀ ԱԳՆ հայտարարությունը 21.04.2016 ([http://mfa.am/hy/interviews/item/2016/04/21/mfa\\_statement\\_nk/](http://mfa.am/hy/interviews/item/2016/04/21/mfa_statement_nk/))

## **РЕЗЮМЕ**

**Азербайджано-карабахская Апрельская война: применение основных принципов по урегулированию конфликта в механизмах политического сдерживания по отношению к сторонам конфликта**  
**Нелли Багдасарян**

**Ключевые слова:** Азербайджано-карабахский конфликт, Апрельская война, сопредседательство Минской группы ОБСЕ, Республика Армения, Республика Арцах, Россия, США, Франция, принцип территориальной целостности, принцип неприменения силы или угрозы силой, принцип равноправия и самоопределения народов.

В статье представлены реакция международного сообщества на новый этап эскалации азербайджано-карабахского конфликта-Апрельскую войну и механизмы сдерживания по отношению к сторонам конфликта, в частности, принципы урегулирования отношений между странами, в соблюдении норм международного права – приверженность принципу неприменения силы или угрозы силой, принцип уважения территориальной целостности государств. Были рассмотрены позиции со-председательства Минской группы ОБСЕ, государств-члены Минской группы ОБСЕ и других заинтересованных стран. Отдельным подпунктом рассмотрены проявления образов действий сторон конфликта по отношению к вышеуказанным механизмам сдерживания. Были сделаны соответствующие заключения и предложения.

## **SUMMARY**

**2016 April Azerbaijani-Karabakh Clashes: Application of Fundamental Principles of Conflict Settlement within Political Deterrence Tools Intended to Parties to the Conflict**  
**Nelli Baghdasaryan**

**Key words:** Azerbaijani-Karabakh Conflict, April War, OSCE Minsk Group Co-Chairs, the Republic of Armenia, the Artsakh Republic, Russia, the USA, France, principle of territorial integrity, principle of non-use of force or threat of force, principle of equal rights and self-determination of peoples.

The article presents the international community response to the April War phase of the Azerbaijani-Karabakh conflict and deterrence mechanisms intended to parties to the conflict. It considers most particularly principles governing relations between states respecting rules of International Law – commitment to the principle of non-use of force or threat of force, respect for the territorial integrity of states. Positions of OSCE Minsk Group Co-Chairmanship, OSCE Minsk Group participating states as well as other countries concerned were addressed. The article considers in a separate sub-paragraph modus operandi of parties to the conflict in relation to the above-mentioned deterrence mechanisms. Relevant conclusions and proposals are also made in the article.